ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2014 թվականի N 51 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի 2-րդ պարբերության, «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի «ե» կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի, Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի դրույթներով և առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ և 9-րդ կետերի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների ընտրության (նշանակման) նպատակով հարցազրույց կազմակերպելու և անցկացնելու ընթացակարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների ընտրության (նշանակման) նպատակով հարցազրույցը կազմակերպող և անցկացնող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____